# ԼՂՀ-Ի ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԳԱՀԸ



Դեկտեմբերի 23-ին ԼՂՀ առաջին գումարման ԳԽ-ի հատուկ նստաշրջանում տեղի ունեցավ նախօրեին ԼՂՀ առաջին նախագահ ընտրված Ռոբերտ Քոչարյանի երդմնակալության արարողությունը:

–Ստանձնելով ԼՂՀ առաջին նախագահի պաշտոնը, երդվում եմ լինել անկախության, քաղաքացիների իրավունքների պաշտպանության, ժողովրդավարության երաշխավորը,– ասաց Ռոբերտ Քոչարյանը:

Ռոբերտ Քոչարյանն ընտրվեց երկու տարով, խորհրդարանի կողմից: Այդ ժամկետը լրանալուց հետո հաջորդ նախագահը կընտրվի հինգ տարով՝ համաժողովրդական ընտրություններով: Սպասվում է, որ հանրապետության նախագահը կնշանակի վարչապետ եւ կձեւավորի կառավարությունը:

*ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ*
*ԼՂՀ-ում մեր սեփ. թղթ.*